

## ԱՐԱՐԱՏ ՃԱՄԲԱՐ

3400 rue Nadon, Montréal, Québec.

Tél. 514-332-1373 poste: 228

Ել-Նամակ: [camp.ararat@campdetesourphagop.com](mailto:camp.ararat@campdetesourphagop.com)

Յանապատկ: [www.campdetesourphagop.com](http://www.campdetesourphagop.com)

Facebook: Camp d'été Ararat

Instagram: sh.araratjampar



## ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՕՐԵՆՔՆԵՐ

### ՕՐԱՑՈՅՑ

Այս տարի ճամբարը կը սկսի Երկուշաբթի 8 Յուլիսին եւ կ'աւարտի 16 Օգոստոս 2024-ին՝ ընդամենը 6 շաբաթ տեւողութեամբ:

### ԾՐԱԳԻՐ ԵՒ ՍԱԿ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԾՐՁԱՆ՝ 8 Ապրիլ մինչեւ 8 Օգոստոս 2024: 220.00 տոլար/ երեխայ:

10.00 տոլարի զեղչ մը պիտի սահմանուի արձանագրութեան սակին վրայ մէկէ աւելի երեխաներու արձանագրութեան պարագային իւրաքանչիւր շաբթուայ համար:

Առաջին երեխայ	Երկրորդ երեխայ	Երրորդ երեխայ
220\$	210\$	200\$

Արձանագրութեան սակը կը ներառէ ճամբարի վերնաշապիկ մը, ինչպէս նաեւ նախատեսուած պտոյտներուն մասնակցութեան սակերը:

ՓՈԽԱԴՐԱԿԱՌՔԻ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ՝ Փոխադրակառքի սպասարկութիւնը տեղի պիտի չունենան այս տարի:

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐ՝ Ժամը 16-էն 18 (վճարումները կանխիկ՝ շաբթուայ վերջ): Սակ՝ 45.00 տոլար շաբաթական կամ 10.00 տոլար օրական:

### ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՅՔ՝

Կարող էք ձեր գաւակը արձանագրել եւ բոլոր վճարումները կատարել առցանց՝ կապուելով ճամբարի կայքէջի հասցէին՝ [www.campdetesourphagop.com](http://www.campdetesourphagop.com) սեղմելով "Nous Joindre" եւ ապա "notre portail" կոճակները:

Բարեհաճեցէք ձեր գաւակը արձանագրել ձեր նախընտրած շաբթուան նախորդող Զինքշաբթի օրը: Չենք ընդունիր ճամբարականներ որոնք նախապէս չեն արձանագրուած :

Եթէ անցեալ՝ 2021 ճամբարի արձանագրութիւնները առցանց կատարած էք, դուք արդէն պէտք է ունենաք ձեր մուտքի անունն ու անցքի գաղտնի բանալին: Մոռացումի պարագային բարեհաճեցէք կապուիլ մեզի հետ:

### ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ՝

Հիմնական արձանագրութիւնները կը նկատուին վերջնական:

Արձանագրութիւնը չեղեալ նկատելու պարագային՝ 50,00 տոլարի գումար մը պիտի գանձուի իւրաքանչիւր երեխայի եւ իւրաքանչիւր շաբթուայ համար որպէս վարչական ծախս:

Ճամբար յաճախելու շաբաթը փոխելու պարագային՝ 35,00 տոլարի գումար մը պիտի գանձուի իւրաքանչիւր երեխայի եւ իւրաքանչիւր շաբթուայ համար որպէս վարչական ծախս:

Յաւելեալ վերնաշապիկի գինն է 12,00 տոլար:

Իւրայատուկ եւ առանձին վճարագրերով ծնողքը պարտի վճարել խնամակալութեան ծառայութեան սպասարկութիւններուն ճշդուած սակերը:

Ճամբարի տնօրէնութիւնը իրեն կը վերապահէ շնջելու յայտարարուած ծրագիր եւ կամ պտոյտ մը եթէ ճամբարականներու թիւը անբաւարար նկատուի:

Այն պարագային որ ձեր զաւակը ի՞նչ պատճառաւ պիտի չմասնակցի պտոյտի մը, կը խնդրուի ծնողներէն այդ օր երեխան տուն պահել, որովհետեւ բոլոր վարիչները ստիպուած են խումբերուն ընկերանալ: Սակայն, ծնողներէն կը խնդրենք անպայման տեղեակ պահել մեզ ճամբարականի բացակայութեան պարագային:

Փոխադրակառքի սպասարկութիւն տեղի պիտի չ'ունենայ բացառիկ այն օրերուն երբ ճամբարը իր աշխատանքները կ'աւարտէ սովորական ժամերէն աւելի ուշ: Այդ օրերուն՝ ծնողները պարտաւոր են ապահովել իրենց երեխաներուն տուն վերադարձը:

Ծնողն ու նախօրօք լիազօրուած անձը միայն կրնայ ստանձնել երեխան: Արդ՝ անոնք պարտաւոր են ճշդապահ ըլլալ եւ տեղեակ երեխաները ստանձնելու ընթացքէն: Ճամբարի պատասխանատուները երեխան պիտի պահեն մինչեւ ծնողքի կամ լիազօրուած անձի ճամբար ներկայանալը:

## **ՃԱՄԲԱՐԻ ԱՌՕՐԵԱՅ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ**

Ճամբարի դռները կը բացուին առաւօտեան ժամը 8:00-ին, իսկ գործունեութիւնը կը սկսի առաւօտեան ժամը 8:30-ին:

Ճամբարականները տարիքային դրութեամբ կը բաժնուին խումբերու՝ հիմնուելով Չբօսանքի եւ Մարմնամարզի Նախարարութեան թելադրութեանց:

Օրուայ ընթացքին, խումբերը կը հետեւին այլազան ծրագիրներու՝ ձեռային աշխատանքի, մարզանքի, պարի, երգի, թատերական, դաստիարակչական եւ մշակութային խաղերու, լողի եւլն.:

Ճամբարը իր սովորական առօրեան կ'աւարտէ կէսօրէ ետք ժամը 3:45-ին: Այն պզտիկները, որոնք կ'օգտագործեն փոխադրակառքի սպասարկութիւնը կը յանձնուին համապատասխան սպասարկուներուն: Կէսօրէ ետք ժամը 4-ին եթէ ծնողները տակաւին ճամբար չեն ներկայացած, պզտիկները պիտի յանձնուին խնամակալութեան սպասարկութեան ծրագրի պատասխանատուին՝ համապատասխան սակի մը փոխարէն: \*Չենք ուզեր եւ չենք կրնար ճամբարականը ձգել առանց հսկողութեան որեւէ պարագայի\*:

## **ԿԱՐՔԱԳԻԾ - ԿԱՐԳԱՊԱՅԱԿԱՆ**

Որեւէ տեսակի վայրագ վարուելակերպ անընդունելի վարքագիծ է ճամբարէն ներս: Նման անախորժ պարագաներուն հետեւեալ կարգապահական ուղղութիւնը պիտի որդեգրուի:

Ճայրայեղ պարագային երեխան կը կախակայուի ճամբար յաճախելէ:

## ԶԳԵՍՏԱԻՈՐՈՒՄ

Ճամբարականը ամեն օր պարտի հագուիլ ճամբարի վերնաշապիկը (T-shirt):

Ճամբարականը ամեն օր պարտի իր հետ ունենալ իր լողագգեստն ու անձեռոցը՝ ինչ որ ալ ըլլայ այդ օրուայ եղանակը:

Ճամբարականը պարտի սովորական մարզանքի եւ խաղի զգեստներով ներկայանալ ճամբար (կարճ տաբատ, մարզանքի կօշիկ, գլխարկ, ելև.): Բարեհաճեցէք նաեւ ձեր երեխայի բոլոր իրերը մակագրել իր անունով:

Արեւի ճառագայթներու դէմ պաշտպանութիւն - Ապահով պետք է ըլլալ որ ձեր զաւակը բաւարար կերպով պաշտպանուած է արեւի ճառագայթներուն դէմ: Բարեհաճեցէք ձեր պզտիկին հետ ճամբար ուղարկել անչրանցիկ արեւի ճառագայթներու դէմ մածուկ (crème solaire), որ անհրաժեշտ պարագային ձեր զաւակը օգտագործէ զայն:

## ՍՆՈՒՆԴ

Ճնողը պարտի ապահովել իր զաւակի ամօրեայ սնունդը:

Երեխան ամեն օր իր հետ պետք է ունենայ 2 նախընթրիք եւ 1 պաղ ճաշ: Բարեհաճեցէք երեխայի ճաշամանին մէջ նաեւ զետեղել սառոյցի տուփիկ՝ ճաշի թարմութիւնը պահելու համար: Նաեւ ամօրեայ կերպով ունենալ ջրաման:

Ձեր ուշադրութեան կը յանձնենք թէ բացարձակապէս արգիլուած է դրամ բերել ուտելիք եւ զովացուցիչ գնելու նպատակաւ:

Ապահովութեան համար արգիլուած է ապակիէ ամաններու եւ զաւաթներու օգտագործումը:

Կարելոր - Շատ մը սննդային դիւրագգացութիւններու (allergies) պատճառով, կը խնդրենք ձեռողներէն ապահով ըլլալ եւ բացարձակապէս ճամբար չդրկել գետնապիստակ (arachides), ընկոյզ եւ նուշ պարունակող ուտեստեղէններ (Nutella, Peanut Butter):

Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել տնօրէնութեան՝

2024-04-01